ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N <<ՀՀ ՄՆ ՄՇԻԳ-ԲԸԱԾՁԲ-16/29-6>>

ք. Երևան «06» 05 2016 թ.

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը (այսուհետև՝ Պատվիրատու), ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Ս. Մոլդայանի, մի կողմից, և «Կոտայքնախագիծ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Վարդանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **ՀՀ Կոտայքի մարզի Կամարիս գյուղի Սբ. Հովհաննես եկեղեցու վերանորոգման և տարածքի բարեկարգման մնացորդ աշխատանքները առ 01.01.2016 թ. և ՀՀ Կոտայքի մարզի Բջնի ամրոցի հյուսիսային պարսպապատի և ժամանակավոր մուտքային մասի 2016 թ. կատարվելիք վերականգնման աշխատանքները** (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և (առկա ֆինանսական միջոցների շրջանակներում կատարվելիք աշխատանքների համար) կատարման ժամկետը սահմանվում է՝ **2016թ. նոյեմբերի 25-ը**:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների

անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի /՝ արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով,

ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են նախագծանախահաշվային փաստաթղթերում:

3.4.10 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության (Հավելված N 4) ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում

պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կարգով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝

վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:

4.7 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **75 879 232 (յոթանասունհինգ միլիոն ութ հարյուր յոթանասունինը հազար երկու հարյուր երեսուներկու)** ՀՀ դրամ: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

7-րդ չափաբաժին 64 397 592 (վաթսունչորս միլիոն երեք հարյուր իննսունյոթ հազար հինգ հարյուր իննսուներկու) ՀՀ դրամ:

8-րդ չափաբաժին 11 481 640 (տասնմեկ միլիոն չորս հարյուր ութսունմեկ հազար վեց հարյուր քառասուն) ՀՀ դրամ:

5.1.1 Սույն պայմանագիրը կնքվում է ընդհանուր՝ **75 879 232 (յոթանասունհինգ միլիոն ութ հարյուր յոթանասունինը հազար երկու հարյուր երեսուներկու)** ՀՀ դրամ արժեքով, սակայն քանի որ նախատեսված են ավելի քիչ միջոցներ, քան պայմանագրի գինն է՝ Աշխատանքի մնացած մասը կկատարվի հաջորդող տարիներին միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Աշխատանքի կատարման համար տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի[1]:

Ընդ որում՝ **7-րդ չափաբաժնի** համար՝ սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում և 1.2 կետին համապատասխան Կապալառուի կողմից՝ իրականացվելիք աշխատանքների դիմաց վճարման ենթակա գումարը կազմում է **14 355 390 (տասնչորս միլիոն երեք հարյուր հիսունհինգ հազար երեք հարյուր իննսուն)** ՀՀ դրամ:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ

---

[1] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե կիրառելի չէ:*

ուշ քան 2016թ դեկտեմբերի 25-ը՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.5 Սույն պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[2].

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի տեսակի սահմանված միավոր գինն է.

ՎԳՏ - ծավալաթերթ-նախահաշվով սահմանված առանձին տեսակների (տողերի) դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[3]:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից

---

[2] *Եթե պայմանագրում ներառված են 1 ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:*

[3] *Պայմանագիրն օրենքի 14 րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար փոխյալ տարվա ընթացքում կիրառվածն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր.*

յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնական է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.5 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.6 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի

փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.7 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.9 Սույն պայմանագիրը կազմված է 21 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.10 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ մշակույթի նախարարություն	«Կոտայքնախագիծ» ՍՊԸ,
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,	Հասցեն՝ ք. Աբովյան, Բարեկամության 2.
Կառավարական 2-րդ շենք,	հեռ.՝ (0222) 2-54-44,
հեռ.՝ (010) 58-51-78, (011) 58-51-78	էլ. փոստ՝ kotaykproekt@rambler.ru
ՀՎՀՀ 02508054	ՀՎՀՀ 03503627,
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի	հ/հ 163088121476
գործառնական վարչությունում	«ՀԱՅԿԱՐԻՆԲԱՆԿ» ՓԲԸ «Աբովյան» մասնաճյուղ:
Ա. Մուրադյան	Ա. Վարդանյան
(ստորագրություն)	
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1

<<06>> 05 2016 թ. կնքված

«ՀՀ ՄՆ ՄՇԻԳ-ԲՀԱՇՁԲ-16/29-6» ծածկագրով գնման պայմանագրի

7-րդ չափաբաժին

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ - ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ Կոտայքի մարզի Կամարիս գյուղի Սբ. Հովհաննես եկեղեցու վերանորոգման և տարածքի բարեկարգման մնացորդ աշխատանքների առ 01.01.2016 թ.

N	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չափման միավոր	Քանակ	Միավորի գին (հազար դրամ)	Ընդ. Արժեք (հազար դրամ)
1	2	3	4	5	6
	Հիմքեր				
2	Բցված հիմքերի մաքրում քայքայված շաղախից և լվացում ջրի շիթով ճնշման տակ	քմ	49,70	3,683	183,065
3	Հիմքերի սվաղ ցեմենտ-ավազե շաղախով	քմ	49,70	3,543	176,091
4	Հիմքերի ջրամեկուսացում 2 շերտ իզոգամով	քմ	49,70	5,807	288,587
5	Գրունտի հետլիցք ձեռքի գործիքներով	խմ	49,70	1,587	78,859
5'	Գրունտի տեղափոխում ձեռքի պատգարակներով 90մ հեռավորությամբ 66,8*1,7	տ.	113,60	7,253	823,995
	Դրսի պատեր				
7	Մետաղական խողովակներից ներքին տախտակամածի կապում և քանդում	100քմ	1,50	202,131	303,197
8	Հարթ պատերի կարանների մաքրում, լվացում, կարանախցում	10գծմ	19,44	8,554	166,285
9	Պատի խամքարի մասի մաքրում քայքայված շաղախից և լվացում ջրի շիթով ճնշման տակ	քմ	11,43	3,683	42,101
10	Պատի խամքարի մասի սվաղում ցեմենտ-ավազե շաղախով	քմ	11,43	3,542	40,487
11	Պարզ պրոֆիլով ուղղաձիգ քիվերի քանդում համարակալումով, տուֆ քարից	քմ	7,10	23,687	168,179
13	Նույնի նոր տաշ ու շար տուֆից	քմ	7,30	132,867	969,929
	Ինտերեր				
17	Թաղերի քայքայված շաղախի քանդում հեռացում 50% և լվացում ջրի շիթով ճնշման տակ,	քմ	64,85	3,683	238,869
18	Թաղերի սվաղ ցեմենտ-ավազի շաղախով	քմ	129,70	10,895	1 413,136
21	Խորանի միակոր մասի քայքայված շաղախի քանդում հեռացում - 50% և լվացում ջրի շիթով ճնշման տակ	քմ	12,60	3,683	46,411
22	Նույնի նոր սվաղ ցեմենտ-ավազե շաղախով	քմ	25,20	10,895	274,565
23	Հարթ պատի նոր տաշ ու շար կոպտատաշ տուֆ քարով	քմ	0,70	63,518	44,463
24	Հարթ կոպտատաշ պատի քայքայված շաղախի քանդում հեռացում 50% և լվացում ջրի շիթով ճնշման տակ,	քմ	98,35	3,683	362,263
25	Նույնի պատի սվաղ ցեմենտ-ավազե շաղախով	քմ	196,70	3,543	696,924
29	Պատուհանների թեք մասերի լիսքի քանդում հեռացում	խմ	4,00	15,867	63,468
30	Նույնի լվացում ջրի շիթով ճնշման տակ,	քմ	82,19	1,133	93,151
31	Պատուհանների թեք մասերի լիցքի կատարում ցեմ. ավազի շաղախով	խմ	3,00	70,970	212,910
32	Պատուհանների թեք մասերի սվաղ ցեմենտ-ավազե շաղախով	քմ	82,19	5,767	473,989
33	Դռան թեք մասերի քայքայված շաղախի քանդում հեռացում 30% և լվացում ջրի շիթով ճնշման տակ	քմ	4,56	3,683	16,796
34	Դռան թեք մասերի սվաղ ցեմենտ-ավազե շաղախով	քմ	15,20	5,767	87,658

35	Խորշերի թեք մասերի սվաղ բարդ շաղախով	քմ	17,22	5,767	99,307
36	Նոր պատուհանների շրջանակների պատրաստում և տեղադրում 40*40*4 մետաղական անկյունակից	քմ	7,12	19,922	141,845
37	Նույնի մետաղական ցանց 2-2սմ անցքերով	քմ	7,12	11,008	78,375
38	Պատուհանների ներկում յուղաներկով 2 շերտ	քմ	7,80	1,577	12,299
39	Նոր մետաղական դռան պատրաստում և տեղադրում մետաղական անկյունակից 45*45*4 չափի	քմ	2,20	75,319	165,702
40	Դռների երկշերտ յուղաներկում	քմ	8,40	1,577	13,245
41	Պատերում և մույթերում անցքերի և դատարկությունների փոշեզրկում և լվացում. հատուկ բաղադրակազմի շաղախի ներարկում ճնշման տակ	լիտր	3029,55	2,320	7 029,231
43	Մուտքի աստիճանների քանդում հեռացում	քմ	4,20	4,023	16,898
44	Աստիճանների տաշ ու շար սրբատաշ բազալտից	քմ	4,20	125,544	527,284
45	Սրբատաշ տուֆ քարի նոր տաշ ու շար /կամարաշարի լրացումով/	քմ	1,20	79,017	94,820
46	Նույնի վրա կամարաշարի փորագրում	քդմ	80,0	4,703	376,274
47	Բեմի աստիճանների դիմային մասի սվաղ ցեմ.ավազի շաղախով	քմ	2,50	5,747	14,367
48	Մույթերի, որմնամույթերի, քիվերի մաքրում քայքայված շաղախից-30% և լվացում ջրաշիթով ճնշման տակ	քմ	43,20	3,683	159,123
49	Կամարների մաքրում քայքայված սվաղից -30% և լվացում ջրաշիթով ճնշման տակ	քմ	20,70	3,683	76,247
50	Եկեղեցու ճակատների լվացում ջրաշիթով ճնշման տակ	քմ	283,0	1,133	320,740
58	Մույթերի քայքայված երեսապատի քարերի քանդում հեռացում	քմ	4,0	7,140	28,561
59	Նույնի նոր տաշ ու շար տուֆից	քմ	4,0	58,975	235,898
64	Հարթ ծածկասալերի վերաշար սրբատաշ տուֆից եզրերի մշակումով	քմ	13,0	33,967	441,576
65	Նույնի նոր տաշ ու շար սրբատաշ տուֆից	քմ	117,0	100,261	11 730,491
66	Լիցքի կատարում ծածկասալերի տակ 14 սմ հաստությամբ	խմ	14,38	73,217	1 052,862
67	Ծածկասալերի մակերեսների պատում /ներկում/ երկշերտ բուսայուղով	100քմ	3,23	196,183	633,672
68	Հին կրաշաղախի լիցքի քանդում հեռացում	խմ	14,60	15,867	231,658
69	Լիցքի կատարում խամքարով և բարդ շաղախով	խմ	15,01	57,023	855,917
70	Ներսի սվաղած մասերի ներկում ջրային /լատեքսային/ ներկով 2 երես	քմ	466,20	2,134	995,010
	Տարածքի բարեկարգում				
71	Անմշակ քարերով պատի քանդում հեռացում /40*0 9*1.5/ - 54խմ	խմ	54,0	12,130	654,995
72	Բետոնի պատի քանդում հեռացում	խմ	27,0	29,543	797,663
73	Հիմքերի համար ժապավենային հիմքերի փորում ձեռքի գործիքներով 4-րդ կարգի գրունտում	խմ	38,0	5,497	208,878
74	Բետոնի հենապատի սվաղում մետաղական ցանցի վրա ցեմենտե շաղախով	քմ	138,0	5,531	763,234
75	Նույնի վերադիրների նոր տաշ ու շար սրբատաշ բազալտից	քմ	8,1	99,364	804,852
76	Ժապավենային հիմքերի պատրաստում բուտաբետոնից	խմ	29,4	47,434	1 394,558
77	*Անմշակ քարերով միակողմանի բետոնի պատի շար-*				
ա	Բետոնից պատի պատրաստում B -7,5 բետոնից	խմ	20,0	77,194	1 543,887
բ	Երեսապատի շար կոպ տատաշ տուֆից	քմ	99,0	18,754	1 856,627
78	Մայթերի և սալահատակների համար բուսահողի քանդում հեռացում 3-րդ կարգի գրունտում ձեռքի գործիքներով	խմ	27,0	3,117	84,152
79	Նույնի համար խճի նախապատրաստական շերտ 5 սմ	խմ	6,8	23,442	159,409

	հաստությամբ				
80	Մայթի համար բետոնից նախապատրաստական շերտ 10 սմ հաստությամբ	խմ	13,6	46,705	635,187
81	Մայթի պատրաստում սրբատաշ 8 սմ հաստությամբ բազալտ քարից	քմ	136,0	31,123	4 232,785
82	Սալիատակ սրբատաշ անկանոն շարվածքի 8 սմ հաստությամբ բազալտ քարերով	քմ	108,5	28,092	3 047,948
83	Ջրահեռացման համար սրբատաշ բազալտից առվակի պատրաստում քարորդների մշակումով	քմ	36,0	62,888	2 263,951
84	Նույնի տակ խճից նախապատրաստական շերտ 5սմ հաստությամբ	խմ	1,80	23,442	42,196
85	Նույնի վրա բետոնի նախապատրաստական շերտ 10սմ հաստությամբ	խմ	3,60	46,705	168,138
86	Բետոնից ջրահեռացման առվակի պատրաստում	խմ	2,0	63,993	127,985
87	Նույնի տակ խճից նախապատրաստական շերտ 5սմ հաստությամբ	խմ	0,75	23,442	17,582
88	Աստիճանների քանդում հեռացում	խմ	6,0	12,130	72,777
89	Բազալտից աստիճանների տեղադրում	100գծմ	0,20	1 585,008	317,002
90	Նույնի տակ խճից նախապատրաստական շերտ 5սմ հաստությամբ	խմ	0,40	23,442	9,377
91	Նույնի վրա բետոնի նախապատրաստական շերտ 10սմ հաստությամբ	խմ	0,80	46,705	37,364
92	Նստարանների պատրաստում և տեղադրում 2*0,5 մ չափի /քարի տումբաների վրա դրված փայտե չորսուներով/	հատ	10,0	116,966	1 169,661
93	Տարածքի ճիմապատում	քմ	300,0	3,904	1 171,342
	Գլխավոր մուտք				
94	Հիմքերի փորում ձեռքի գործիքներով 4-րդ կարգի գրունտում	խմ	0,80	10,427	8,342
95	Հիմքի պատրաստում բետոնից	քմ	0,80	65,192	52,153
96	Հարթ երեսապատի նոր տաշուշար սրբատաշ տուֆից	քմ	15,50	78,863	1 222,373
97	Հարթ երեսապատի նոր տաշուշար սրբատաշ տուֆից կոր և եռանկյունի կտրվող	քմ	2,00	86,371	172,742
98	Հարթ պատի եզրերի վալիկների մշակում	քմ	1,60	58,254	93,207
99	Կամարի նոր տաշու շար սրբատաշ տուֆից	քմ	1,60	141,399	226,238
100	Թաղի նոր տաշու շար սրբատաշ տուֆից	քմ	1,60	149,477	239,163
101	Պարզ պրոֆիլով ուղղաձիգ քիվի նոր տաշու շար սրբատաշ տուֆից	քմ	3,50	132,757	464,649
102	Ե/բետառնե միջուկի պատրաստում առանց կաղապարի	խմ	0,74	143,108	105,900
103	Հարթ ծածկասալի նոր տաշու շատ տուֆից	քմ	1,70	100,195	170,331
104	Նոր լիցքի կատարում խամքարով ցեմ-ավազի շաղախով	խմ	5,20	55,459	288,387
105	Դռների պատրաստում և տեղադրում մետաղական խողովակից	քմ	3,63	68,400	248,292
106	Դռների կրկնակի յուղաներկում	քմ	7,26	1,583	11,494
107	Շին աղբի և ավելորդ հողի ձեռքով բարձում ավտոմեքենաները 10%	խմ	42,60	0,878	37,418
108	Նույնը մեխանիզմով	100խմ	1,96	128,453	251,767
109	Նույնի տեղափոխում մեքենաներով 5կմ հեռ. վրա	տն	85,60	2,422	207,362
112	Սալահատակի սրբատաշ տուֆ քարի համարակալում, ապամոնտաժում, տեղափոխում, պահեստավորում	քմ	144,0	5,128	738,495
113	Սալահատակի տակի հողի լիցքի քանդում-հեռացում 20սմ խորությամբ	խմ	28,8	5,497	158,307
114	Տուֆ քարի սալահատակի վերաշարում մշակումով 70%	քմ	100,8	18,063	1 820,718
115	Նույնի նոր տաշ ու շար տուֆ քարից 30%	քմ	43,2	61,493	2 656,481

116	Նույնի հաշար ավազի նախապատրաստական շերտ 10սմ	խմ	14,4	10,682	153,816
117	Նույնի հաշար ցեմենտ ավազի շաղախ 10 սմ	խմ	14,4	42,350	609,844
118	Շին աղբի և ավելորդ հողի տեղափոխում ձեռքի պաղդարակով 90 մ հեռավորության վրա Կ1,7 113,6 տ +49տ+78,2տ+19տ+215,8տ	տն	42,50	6,630	281,781
	ԸՆԴԱՄԵՆԸ				**64 397,592**

**Գինը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ՝ շահույթը 11% և ԱԱՀ-ն 20%*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական 2-րդ շենք,
հեռ՝ (010) 58-51-78, (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054
h/h 900011077683
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչությունում

Ս. Մուրադյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Կոտայքնախագիծ» ՍՊԸ,
Հասցեն՝ ք. Աբովյան, Բարեկամության 2
հեռ.՝ (0222) 2-54-44,
էլ. փոստ՝ kotaykproekt@rambler.ru
ՀՎՀՀ 03503627,
h/h 163088121476
«ՀԱՅԲԱՆԿ» ՓԲԸ «Աբովյան» մասնաճյուղ.

Ա. Վարդանյան

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ - ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ Կոտայքի մարզի Կամարիս գյուղի Սբ. Հովհաննես եկեղեցու վերանորոգման և տարածքի բարեկարգման 2016 թ, կատարվելիք աշխատանքների

N	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չափման միավոր	Քանակ	Միավորի գին (հազար դրամ)	Ընդ. Արժեք (հազար դրամ)
1	2	3	4	5	6
41	Պատերում և մույթերում անցքերի և դատարկությունների փոշեզրկում և լվացում, հատուկ բաղադրակազմի շաղախի ներարկում ճնշման տակ	լիտր	94,30	2,360	222,59
2	Բացված հիմքերի մաքրում քայքայված շաղախից և լվացում ջրի շիթով ճնշման տակ	քմ	49,70	3,837	190,72
3	Հիմքերի սվաղ ցեմենտ-ավազի շաղախով	քմ	49,70	3,505	174,18
5'	Գրունտի տեղափոխում ձեռքի պատգարակներով 90մ հեռավորության. 66,8*1,7	տ.	113,60	7,557	858,44
9	Պատի խամքարի մասի մաքրում քայքայված շաղախից և լվացում ջրի շիթով ճնշման տակ	քմ	11,43	3,837	43,86
10	Պատի խամքարի մասի սվաղում ցեմենտ-ավազե շաղախով	քմ	11,43	3,504	40,05
65	Նույնի նոր տաշ ու շար սրբատաշ տուֆից	քմ	117,00	101,025	11 819,90
66	Լիցքի կատարում ծածկասալերի տակ 14 սմ հաստ	խմ	14,38	69,934	1 005,65
	Ընդամենը				**14 355,39**

**Գինը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ՝ շահույթը 11% և ԱԱՀ-ն 20%*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական 2-րդ շենք,
հեռ.՝ (010) 58-51-78, (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054
հ/հ 900010077683
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում

Ս. Մուրադյան
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Կոտայքնախագիծ» ՍՊԸ,
Հասցեն՝ ք. Աբովյան, Բարեկամության 2.
հեռ.՝ (0222) 2-54-44,
էլ փոստ՝ kotaykproekt@rambler.ru
ՀՎՀՀ 03503627,
հ/հ 163088121476
«ՀԱՅԿԱՐԴ ԲԱՆԿ» ՓԲԸ «Աբովյան» մասնաճյուղ:

Ա. Վարդանյան

Կ.Տ

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ - ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ Կոտայքի մարզի Բջնի ամրոցի հյուսիսային պարսպապատի և ժամանակավոր մուտքային մասի 2016 թ. կատարվելիք վերականգնման աշխատանքների

N	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չափման միավոր	Քանակ	Միավորի գին (հազար դրամ)	Ընդ. Արժեք (հազար դրամ)
1	2	3	4	5	6
	Հիմքեր				
1	Հողի քանդում հեռացում 4-րդ կարգի գրունտում 70 սմ խորությամբ	խմ	21,00	6,14	128,880
2	Խճից նախապատրաստական շերտ 10 սմ հաստությամբ	խմ	7,00	19,69	137,822
3	Բուտաբետոնե հիմնատակի իրականացում 50 սմ հաստ.	խմ	10,00	41,07	410,661
4	Բետոնե հիմնասալի պատրաստում B 20 դասի բետոնով 20 սմ հաստ.	խմ	4,00	60,32	241,263
5	Հիմքերի հորիզոնական և պատերի ստորգետնյա մասերի ուղղաձիգ ջրամեկուսացում երկու շերտ իզոգամով	քմ	41,50	6,40	265,471
6	Հողի հետլիցքի կատարում ձեռքի գործիքներով	խմ	9,00	1,58	14,236
7	Շինաղբի ձեռքով բարձում և տեղափոխում 5 կմ հեռ. վրա	տն	30,00	2,90	86,995
	Արտաքին աշխատանքներ				
1	Պարսպապատի երկու կողմից 1.5 մ բարձրության բազալտե կոպտատաշ քարերով պատի նոր տաշ ու շար	քմ	30,00	107,09	3 212,723
2	Պարսպապատի միջուկի լիցքի իրականացում խամքարով և կրաշաղախով	խմ	15,00	64,84	972,559
3	Պատի վերին հատվածի ջրամեկուսացման իրականացում կրաշաղախով և հարթ խամքարով	քմ	20,00	17,46	349,207
	Պարսպապատի մուտքային հատվածից հարավ ընկած պարսպապատ				
1	Պահպանված պարսպապատի խարխուլ հատվածի քարերի քանդում վերաշարում ներսից և դրսից կոպտատաշ բազալտ քարից	քմ	14,00	69,01	966,153
2	Նույնի լիցքի իրականացում խամքարով և կրաշաղախով	խմ	15,00	64,84	972,559
3	Նույնի հիմքերի ամրացման համար հողերի քանդում 4-րդ կարգի գրունտում 70 սմ խորության ձեռքի գործիքներով	խմ	12,60	6,14	77,315
4	Բուտաբետոնե հիմքերի ամրացում 50 սմ բարձրությամբ	խմ	9,00	41,07	369,602
5	Բետոնե հիմնասալի պատրաստում B 20 դասի բետոնով 20 սմ հաստ.	խմ	3,60	60,32	217,161
6	Պատերի նոր տաշ ու շար կոպտատաշ բազալտ քարից	քմ	12,50	107,09	1 338,649
7	Պատերի միջուկի լիցքի իրականավում կրաշաղախով և խամքարով	խմ	10,50	64,87	681,109
	Այլ աշխատանքներ				
1	Շինանյութի տեղափոխում լրացուցիչ 20 մ հեռ. վրա	տն	35,00	2,72	95,221
2	Շինանյութի բարձրացում լրացուցիչ 20 մ	տն	35,00	14,80	517,861
3	Մետաղական պարզ ճաղացանցե դարպասների պատրաստում 40x40մմ հատույթի տնամեջ մետաղական խողովակներից և տեղադրում	տն	0,11	3 118,36	327,428
4	Նույնի երկշերտ ներկում հակակոռոզիոն ներկով	տն	0,22	19,08	4,103

	կանգնակների հետ միասին				
5	Կանգնակների հիմքերի հասար հողի քանդում ձեռքի գործիքներով 4-րդ կարգի գրունտում	խմ	0,53	11,64	6,169
6	Կանգնակների տեղադրում 100x100 մմ հատույթով սնամեջ խողովակներից	տն	0,12	499,00	59,881
7	Կանգնակների հիմքերի բետոնացում Բ-12.5 բետոնով	խմ	0,50	57,23	28,614
	Ընդամենը				**11 481,640**

*Գինը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ՝ շահույթը 11% և ԱԱՀ-ն 20%

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական 2-րդ շենք,
հեռ.՝ (010) 58-51-78, (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054
հ/հ 90021107691
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչությունում

Մ. Մուրադյան
(ստորագրություն)

Կ Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Կոտայքնախագիծ» ՍՊԸ,
Հասցեն՝ ք. Աբովյան, Բարեկամության 2
հեռ.՝ (0222) 2-54-44,
էլ. փոստ՝ kotaykproekt@rambler.ru
ՀՎՀՀ 03503627,
հ/հ 163088121476
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ՓԲԸ «Աբովյան» մասնաճյուղ:

Ա. Վարդանյան

Հավելված 2

«06» 05 2016 թ. կնքված

«ՀՀ ՄՆ ՄՇԻԳ-ԲՀԱՇՁԲ-16/29-6» ծածկագրով գնման պայմանագրի

7-րդ չափաբաժին

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ Կոտայքի մարզի Կամարիս գյուղի Սբ. Հովհաննես եկեղեցու վերանորոգման և տարածքի բարեկարգման 2016 թ. կատարվելիք աշխատանքների կատարման

N Ը/Կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
41	Պատերում և մույթերում անցքերի և դատարկությունների փոշեզրկում և լվացում, հատուկ բաղադրակազմի շաղախի ներարկում ճնշման տակ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	25.11.2016թ.
2	Բացված հիմքերի մաքրում քայքայված շաղախից և լվացում ջրի շիթով ճնշման տակ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	25.11.2016թ.
3	Հիմքերի սվաղ ցեմենտ-ավազի շաղախով	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	25.11.2016թ.
5՝	Գրունտի տեղափոխում ձեռքի պատգարակներով 90մ հեռավորութ. 66,8*1,7	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	25.11.2016թ.
9	Պատի խամքարի մասի մաքրում քայքայված շաղախից և լվացում ջրի շիթով ճնշման տակ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	25.11.2016թ.
10	Պատի խամքարի մասի սվաղում ցեմենտ-ավազե շաղախով	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	25.11.2016թ.
65	Նույնի նոր տաշ ու շար սրբատաշ տուֆից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	25.11.2016թ.
66	Լիցքի կատարում ծածկասալերի տակ 14 սմ հաստ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	25.11.2016թ.
	Ընդամենը	**Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը**	**25.11.2016թ.**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական 2-րդ շենք,
հեռ.՝ (010) 58-51-78, (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054
հ/հ 900011077683
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գանձապետական վարչությունում

_____ Ա. Մուրադյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Կոտայքնախագիծ» ՍՊԸ,
Հասցեն՝ ք. Աբովյան, Բարեկամության 2.
հեռ.՝ (0222) 2-54-44,
էլ. փոստ՝ kotaykproekt@rambler.ru
ՀՎՀՀ 03503627,
հ/հ 163088121476
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ՓԲԸ «Աբովյան» մասնաճյուղ:

_____ Ա. Վարդանյան

Կ.Տ.

8-րդ չափաբաժին

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Բջնի ամրոցի հյուսիսային պարսպապատի և ժամանակավոր մուտքային մասի 2016 թ. կատարվելիք վերականգնման աշխատանքների կատարման

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
	Հիմքեր		
1	Հողի քանդում հեռացում 4-րդ կարգի գրունտում 70 սմ խորությամբ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	25.11.2016թ.
2	Խճից նախապատրաստական շերտ 10 սմ հաստությամբ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	25.11.2016թ.
3	Բուտաբետոնե հիմնատակի իրականացում 50 սմ հաստ.	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	25.11.2016թ.
4	Բետոնե հիմնասալի պատրաստում B 20 դասի բետոնով 20 սմ հաստ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	25.11.2016թ.
5	Հիմքերի հորիզոնական և պատերի ստորգետնյա մասերի ուղղաձիգ ջրամեկուսացում երկու շերտ հիդրոգամով	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	25.11.2016թ.
6	Հողի հետլիցքի կատարում ձեռքի գործիքներով	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	25.11.2016թ.
7	Շինաղբի ձեռքով բարձում և տեղափոխում 5 կմ հեռ. վրա	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	25.11.2016թ.
	Արտաքին աշխատանքներ		
1	Պարսպապատի երկու կողմից 1.5 մ բարձրության բազալտե կոպտատաշ քարերով պատի նոր տաշ ու շար	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	25.11.2016թ.
2	Պարսպապատի միջուկի լիցքի իրականացում խամքարով և կրաշաղախով	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	25.11.2016թ.
3	Պատի վերին հատվածի ջրամեկուսացման իրականացում կրաշաղախով և հարթ խամքարով	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	25.11.2016թ.
	Պարսպապատի մուտքային հատվածից հարավ ընկած պարսպապատ		
1	Պահպանված պարսպապատի խարխով հատվածի քարերի քանդում վերաշարում ներսից և դրսից կոպտատաշ բազալտ քարից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	25.11.2016թ.
2	Նույնի լիցքի իրականացում խամքարով և կրաշաղախով	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	25.11.2016թ.
3	Նույնի հիմքերի ամրացման համար հողերի քանդում 4-րդ կարգի գրունտում 70 սմ խորության ձեռքի գործիքներով	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	25.11.2016թ.
4	Բուտաբետոնե հիմքերի ամրացում 50 սմ բարձրությամբ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	25.11.2016թ.
5	Բետոնե հիմնասալի պատրաստում B 20 դասի բետոնով 20 սմ հաստ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	25.11.2016թ.
6	Պատերի նոր տաշ ու շար կոպտատաշ բազալտ քարից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	25.11.2016թ.
7	Պատերի միջուկի լիցքի իրականավում կրաշաղախով և խամքարով	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	25.11.2016թ.
	Այլ աշխատանքներ		
1	Շինանյութի տեղափոխում լրացուցիչ 20 մ հեռ. վրա	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	25.11.2016թ.
2	Շինանյութի բարձրացում լրացուցիչ 20 մ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	25.11.2016թ.
3	Մետաղական պարզ ճաղաշանցե դարպասների պատրաստում 40x40մմ հատույթի սեամեջ մետաղական խողովակներից և տեղադրում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	25.11.2016թ.
4	Նույնի երկշերտ ներկում հակակոռոզիոն ներկով կանգնակների հետ միասին	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	25.11.2016թ.
5	Կանգնակների հիմքերի համար հողի քանդում ձեռքի	Պայմանագիրն	25.11.2016թ.

	գործիքներով 4-րդ կարգի գրունտում	ուժի մեջ մտնելու օրը	
6	Կանգնակների տեղադրում 100x100 մմ հատույթով սնամեջ խողովակներից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	25.11 2016թ.
7	Կանգնակների հիմքերի բետոնացում B-12.5 բետոնով	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	25.11.2016թ.
	Ընդամենը	**Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը**	**25.11.2016թ.**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական 2-րդ շենք,
հեռ.՝ (010) 58-51-78, (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054
հՀ 90001077691
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչությունում

Ս. Մուրադյան
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Կոտայքնախագիծ» ՍՊԸ,
[redacted]ցեն՝ ք. Աբովյան, Բարեկամության 2.
հեռ.՝ (0222) 2-54-44,
էլ. փոստ՝ kotaykproekt@rambler.ru
[redacted] ՀՎՀՀ 03503627,
հ/հ 163088121476
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ՓԲԸ «Աբովյան» մասնաճյուղ:

Ա. Վարդանյան

Կ.Տ

Հավելված 3

«06» 05 2016 թ. կնքված

«ՀՀ ՄՆ ՄՏԻԳ-ԲԸՍՇՁԲ-16/29-6» ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2016 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում								
		մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը Տարի**
7	ՀՀ Կոտայքի մարզի Կամարիս գյուղի Սբ. Հովհաննես եկեղեցու վերանորոգման և տարածքի բարեկարգման 2016 թ. կատարվելիք աշխատանքների կատարման	2 871 078	2 871 078	10 048 773	10 048 773	10 048 773	14 355 390	14 355 390	14 355 390	**14 355 390**
8	ՀՀ Կոտայքի մարզի Բջնի ամրոցի հյուսիսային պարսպապատի և ժամանակավոր մուտքային մասի 2016 թ. կատարվելիք վերականգնման աշխատանքներ	2 296 328	2 296 328	8 037 148	8 037 148	8 037 148	11 481 640	11 481 640	11 481 640	**11 481 640**

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական 2-րդ շենք,
հեռ.՝ (010) 58-51-78, (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչությունում

Ա. Մուրադյան
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Կոտայքնախագիծ» ՍՊԸ,
Հասցեն՝ ք. Աբովյան, Բարեկամության 2,
հեռ.՝ (0222) 2-54-44,
էլ. փոստ՝ kotaykproekt@rambler.ru
ՀՎՀՀ 03503627,
հ/հ 163088121476
«ՀԱՅԷԿՈՆՈՄԻԿԱ» ՓԲԸ «Աբովյան» մասնաճյուղ

Ա. Վարդանյան

Հավելված 4

<<06>>____05____ 2016 թ. կնքված

«ՀՀ ՄՆ ՄՏԻԳ-ԲԸԱՇՁԲ-16/29-6» ծածկագրով գնման պայմանագրի

ԿԱՊԱԼԱՌՈՒ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Կոտայքնախագիծ» ՍՊԸ, Հասցեն՝ ք. Աբովյան, Բարեկամության 2. հեռ.՝ (0222) 2-54-44, էլ. փոստ՝ kotaykproekt@rambler.ru ՀՎՀՀ 03503627, հ/հ 163088121476 «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ՓԲԸ «Աբովյան» մասնաճյուղ:	ՀՀ մշակույթի նախարարություն Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք, հեռ.՝ (010) 58-51-78, (011) 58-51-78 ՀՎՀՀ 02508054 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

«____» «_____» 20__ թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն՝ ի դեմս _____ և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետ /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____ ստորագրություն	_____ ստորագրություն
_____ ազգանուն, անուն	_____ ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1

<<06>>___05___ 2016 թ. կնքված

«ՀՀ ՄՆ ՄՏԻԳ-ԲԸԱՇՁԲ-16/29-6» ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ------ -ին կնքված N ----------
(Կապալառուի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ---------- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն